

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Աշխատանքի անվանում

Կարգավար-Օպերատոր

### Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

### Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

**«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:**

### Աշխատանքի վայրը

ք. Երևան, Աշտարակ

### Աշխատանքի նկարագիր

- Իրականացնել ընկերության ջրաղբյուրներից, պոմպակայաններից, ջրամբարներից և ընկերության տնօրինությունների կարգավարական ծառայությունից ստացվող տեղեկությունների ընդունում և գրանցում;
- Իրականացնել հսկողություն մնացորդային քլորի և ըստ գրաֆիկի դրանց գրանցումների առկայության վրա;
- Համակարգել ջրագծերի, ջրատարների, կոյուղագծերի վթարների, պոմպակայաններում կանգառների, պլանային անջատումների մասին տեղեկությունը;
- Հետևել և համակարգել ջրամատակարարման գոտիների ծախսերի հոսքերը;
- Իրականացնել վերահսկողություն ջրաղբյուրների, ՕԿՁ-ների, բաշխիչ ցանցերի, միջմասնաձյուղային ջրաքանակների առցանց տրվող տվյալների սահմանաչափերի սահմանում և խախտումների;
- Պատասխանել սոցիալական ցանցերի միջոցով բաժանորդների առաջադրած հարցերին և խնդիրներին;
- Իրականացնել հեռակառավարման համակարգի գործածման միջոցով ջրամատակարարման համակարգի ամենօրյա կառավարում;
- Կազմել հաշվետվությունների ջրամատակարարման գոտիների ծախսերի մասով;
- Հաճախորդների սպասարկումը իրականացնելիս առաջնորդվել հաճախորդամետության սկզբունքով, դրսևորել հարգալից, քաղաքավարի և բարյացկամ վերաբերմունք;

### Պահանջներ

- Հաղորդակցման գերազանց հմտություններ
- Հաճախորդների հետ շփման կանոններ
- Համակարգչային ծրագրերի (MS Word and Excel) իմացություն
- Օտար լեզուների՝ անգլերեն և ռուսերեն, իմացությունը ցանկալի է

- Բարձրագույն կրթություն
- Կոնֆլիկտների կառավարման ունակություն
- Թիմային աշխատանք

## Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները /CV հայերեն կամ անգլերեն լեզուներով [hr@vjur.am](mailto:hr@vjur.am) էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Կարգավար-Օպերատոր** կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 033-14-47-48: Հարցազրույցի կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: